NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

28 մարտի 2018 թվականի N ՑՊ-007-03/18

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի մարտի 23-ի հայտը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 39 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.5% եկամտաբերությամբ, 50,000 (հիսուն հազար) հատ անվանական պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի մարտի 27-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 12-րդ գլխի 55 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 39 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.5% եկամտաբերությամբ, 50,000 (հիսուն հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMUNIBB24ER2 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել UNIBB4 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 3-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Միհր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am